II

ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԱՅ ԳԵՆԵՐԱԼՆԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՂԻՆ XIX Դ. ՎԵՐՋԻՆ ԵՎ XX Դ. ՍԿԶԲԻՆ

ՄՈՒՐԱԴ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

XIX դ. սկզբներին Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալուց հետո հայ ժողովրդի մի հատվածը ոչ միայն փրկվեց ֆիզիկական բնաջնջման սպառնալիքից, այլև իրավունք ստացավ զորակոչվելու ու ծառայելու ռուսական բանակում: Ռուսական բանակում ձևավորված հայ սպայական գերդաստանների ներկայացուցիչներն իրենց սխրանքներով աչքի ընկան ինչպես XIX դ. ռուս-թուրքական բոլոր պատերազմների, այնպես էլ XX դ. սկզբի ռուս-ճապոնական, Բալկանյան և Առաջին համաշխարհային պատերազմներում: Այս ժամանակահատվածում ռուսական բանակում ծառայում էին 30-ից ավելի հայազգի գեներալներ և 2000-ից ավելի հայ սպաներ: Ռուսական բանակի տարբեր զորատեսակներում ծառայում և հրամանատարական բարձր պաշտոններ էին զբաղեցնում գեներալ - լեյտենանտներ Ռոստոմ (Վալերիան) Մադաթովը, Մովսես Արգութինսկի - Դոլգորուկովը, Վասիլի Բեյբությանցը, Միքայել Լոռիս - Մելիքովը, Բայբուրդ Շելկովնիկովը, Ադամ Ղորղանովը, Ալեքսանդր Աթաբեկովը, գեներալ-մայորներ Եփրեմ Արծրունին, Մկրտիչ Գալուստովը, Հովհաննես Լազարևը, Հակոբ Ալխազովը, Ֆեոդոր և Վասիլի Հախվերդովները, Գրիգորի Թումանովը, Սողոմոն Արամելիքովը, Իսահակ Թոխաթելովը, Իվան Բաղրամովը, Հակոբ Բագրատունին, Գաբրիել Ղորղանյանը և շատ ուրիշներ, որոնք իրենց արժանի ավանդը ներդրեցին ռուսական բանակի տարած հաղթանակներում, նպաստեցին ռուսական զենքի փառքի տարածմանը[1]:

XIX դարավերջին և XX դարասկզբին ռուսական բանակում ծառայող հայ սպայական հայտնի գերդաստանների՝ Բագրատունիների, Ղորղանյանների, Բաղրամյանների, Տիգրանյանների, Հախվերդյանների[2], Պոզոյանների[3] և այլոց

---

[1] *Տե՛ս Հ. Ա վ ե տ ի ս յ ա ն. Հայոց ազգային միասնության հաղթանակը, 1918 թվական, մայիս, Երևան, 1998, էջ 5–28,* Г. А. А в е т и с я н. Генерал Акоп Багратуни (1879–1943).– ИФЖ, 1997, № 1, с. 52–58; О н ж е. Генерал Гавриил Григорьевич Корганян.– “Вестник общественных наук” НАН РА, 1997, № 2, с. 155–177.

[2] *Տե՛ս* М. Л. К а р а п е т я н. Генерал - лейтенант Ованес Ахвердян. Ереван, 2003.

[3] *Կ. Փ ա հ լ ա ն յ ա ն. Պոզոն (Պոզոյան) հայկական ազնվական ընտանիքի ավանդն Առաջին համաշխարհային պատերազմում.– ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2004, -1, էջ 196–202, Մ. Կ ա ր ա պ ե տ յ ա ն. Հայաստանի առաջին Հանրապետության հրետանու հիմնադիրներ գեներալներ Ռուբեն Պոզոյան, Քրիստափոր Արարատյան.– «Հայկական բանակ», 2006, № 1, էջ 90–93:*

փայլուն համաստեղության մեջ պատվավոր տեղ են զբաղեցնում նաև Արութինովների (Հարությունյանների), Դոլուխանովների (Դոլուխանյանների) և Բեժանբեկերի (Բեժանբեկյանների) սպայական ընտանիքների ներկայացուցիչները, որոնց անունները, մարտական գործունեությունը և սխրանքները պատմագրության մեջ քիչ են ուսումնասիրված:

Ռուսական բանակի կազակային զորքերում ավելի քան 30 տարի ծառայել և գեներալ-մայորի աստիճանի էր հասել Թերեքի կազակային դիվիզիայի հրամանատար Տիգրան Դանիելի Արութինովը (Հարությունյանը)[4]: Նա ծնվել է 1858 թ. հունվարի 1-ին Մոզդոկում: Զինվորական ծառայության է անցել 1875 թ. օգոստոսի 22-ին՝ Մոսկվայի Ալեքսանդրյան զինվորական ուսումնարանը, ապա սպայական հեծելազորային դպրոցը գերազանցությամբ ավարտելուց հետո: 1877 թ. մայիսի 22-ին խորունժիի կոչում ստանալուց հետո Արութինովն ուղարկվել է Կովկասյան ճակատ, նշանակվել Թերեքի կազակային զորքերի Վոլգյան գնդի հարյուրյակի հրամանատար: Այդ պաշտոնում նա ակտիվորեն մասնակցել է 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին, աչքի ընկել մի շարք մարտերում՝ հատկապես Արդահանի և Կարսի գրավման ժամանակ: 1879 թ. հոկտեմբերի 17-ին նրան շնորհվել է հարյուրապետի, 1882 թ. մայիսի 6-ին՝ եսաուլի, իսկ 1900 թ. փետրվարի 26-ին՝ զորական ավագի կոչում[5]: 1886 թ. Արութինովը նշանակվել է երկրորդական գնդի հրամանատար, 1889 թ.՝ Թերեքի կազակային զորքերի 2-րդ - Սունժենյան-Վլադիկավկազյան գնդի հրամանատար, իսկ 1892 թ. դարձել Օսեթական կազակային զորաջոկատի հրամանատար: 1904 թ. ապրիլի 3-ին Արութինովն ուղարկվել է Մոզդոկ, նշանակվել Թերեքի կազակային զորքերի 1-ին Լեռնամոզդոկյան գնդի հրամանատար: 1906 թ. Արութինովին շնորհվել է գնդապետի զինվորական կոչում[6]: Մինչև Առաջին աշխարհամարտը ծառայության մեջ աչքի ընկնելու համար Արութինովը պարգևատրվել է Սբ. Ստանիսլավի 3-րդ աստիճանի՝ սրով և ժապավենով (1878 թ.) և Սբ. Վլադիմիրի 4-րդ աստիճանի (1900 թ.) շքանշաններով: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Արութինովը ծառայել է Արևմտյան ճակատում: 1914 թ. որպես Թերեքի կազակային դիվիզիայի հրամանատար նա ակտիվորեն մասնակցել է Հարավարևմտյան ռազմաճակատում ավստրո-գերմանական զորքերի դեմ մղվող մարտական գործողություններին, հատկապես աչքի ընկել Գալիչ-Լվովյան ռազմական գործողության օգոստոսի 15–18-ը Գնիլայա Լիպա գետի Ռոգատինո բնակավայրի շրջանում տեղի ունեցած կռիվներին և հունգարական Մարմարոշ-Սիգետա քաղաքի գրավման ժամանակ ու արժանացել Սբ. Գեորգիի շքանշանի[7]: Գենարալ-մայորի զինվորական կոչումը նրան շնորհվել է 1916 թ.:

---

[4] *Տե՛ս* Մ. Կ ա ր ա պ ե տ յ ա ն. *Հայերը ռուսական բանակի կազակային զորամասերում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին.– «Հայկական բանակ», 2005, № 1, էջ 117–120:*

[5] *Տե՛ս* Список полковникам по старшинству, СПб., 1906 г. 1 января, с. 380. *Կազակային զորքերի զորական ավագի* (войсковой старшина) *կոչումը համապատասխանում է փոխգնդապետի զինվորական կոչմանը:*

[6] *Տե՛ս նույն տեղում:*

[7] *Տե՛ս* Список генералам по старшинству. СПб., 1913, с. 853 - 854.

Ռուսական բանակի ինժեներական զորքերում ավելի քան 25 տարի ծառայել և գեներալ-մայորի աստիճանի էր հասել Արսենի (Արսեն) Սերգեյի Դոլուխանյանը: Նա ծնվել է 1863 թ. հունվարի 21-ին: Զինվորական ծառայության է անցել 1880 թ. սեպտեմբերի 1-ին՝ Պետերբուրգի զինվորական գիմնազիան ավարտելուց հետո: Նիկոլայան զինվորական ինժեներական ուսումնարանում եղել է յունկեր: 1883 թ. օգոստոսի 12-ին պոդպորուչիկի կոչում ստանալուց հետո, Դոլուխանյանն ուղարկվել է Կովկասյան զինվորական օկրուգ, նշանակվել սակրավորական վաշտի, ապա նորին գերազանցության կոմս գեներալ Տոտլեբենի անվան 4-րդ գումարտակի հրամանատար, ընդունվել և գերազանց առաջադիմությամբ ավարտել է Նիկոլայան զինվորական ինժեներական ակադեմիան: 1904 թ. օգոստոսի 28-ին Դոլուխանյանը նշանակվել է Կովկասյան սակրավորական բրիգադի շտաբի պետ: Մարտական ծառայությունների համար 1885 թ. հունվարի 5-ին նրան շնորհվել է պորուչիկի, 1889 թ. նոյեմբերի 5-ին՝ շտաբս կապիտանի, 1894 թ. օգոստոսի 1-ին՝ կապիտանի, 1901 թ. օգոստոսի 1-ին՝ փոխգնդապետի, իսկ 1906 թ.՝ գնդապետի զինվորական կոչում[8]: Ծառայության մեջ աչքի ընկնելու համար Դոլուխանյանը պարգևատրվել է Սբ. Ստանիսլավի 2-րդ աստիճանի (1909 թ.) և Սբ. Աննայի 2-րդ աստիճանի (1912 թ.) շքանշաններով[9]: Առաջին աշխարհամարտի տարիներին Դոլուխանյանը ծառայել է Արևմտյան և Կովկասյան ռազմաճակատներում: 1916 թ. նրան շնորհվել է գեներալ-մայորի կոչում: Մարտական սխրագործությունների համար Դոլուխանյանը պարգևատրվել է մարտական բարձրագույն պարգևներով՝ Սբ. Գեորգիի շքանշանով և Գեորգիյան ոսկե զենքով[10]: 1917 թ. վերջերին՝ ռուսական Կովկասյան բանակի փլուզումից հետո, Դոլուխանյանը Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի հետ մասնակցել է հայկական ազգային զորամասերի ստեղծմանը: 1917 թ. նոյեմբերին Ա. Դոլուխանյանը նշանակվել է Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի զինվորական գրասենյակի պետ[11]: Այդ պաշտոնում նա ակտիվ մասնակցություն է ունեցել 1918 թ. Անդրկովկաս ներխուժած թուրքական զորքերի դեմ հայկական կորպուսի զորամասերի մղած հերոսական կռիվներին, աչքի ընկել հատկապես 1918 թ. մայիսի 24–28-ը տեղի ունեցած Ղարաքիլիսայի հերոսամարտում[12]: 1918 թ. հուլիսին՝ Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո, Դոլուխանյանը ծառայությունը շարունակել է հայկական զինված ուժերում, ակտիվ մասնակցություն ունեցել Հայաստանի ռազմաքաղաքական կյանքին: 1918 թ. հոկտեմբերի 27-ին Հայաստանի Հանրապետության զինվորական նախարար գեներալ-լեյտենանտ Հախվերդյանի հրամանով Ա. Դոլուխանյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարության Գլխավոր զինվորական շտաբի պետ[13]: Նրա անմիջական ջանքերով և ղեկավարությամբ, չնայած գոյություն ունեցող մի շարք լուրջ դժվարություններին,

---

[8] *Տե՛ս* Список полковникам по старшинству. СПб., 1906 г. 1 января, с. 138.

[9] *Տե՛ս նույն տեղում, էջ 138, 388:*

[10] *Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 199, ց. 1, գ. 38, թ. 238:*

[11] *Տե՛ս նույն տեղում, էջ 239:*

[12] *Տե՛ս նույն տեղում:*

[13] *Տե՛ս նույն տեղում, ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 41, թ. 55:*

մինչև 1919 թ. գարուն կազմավորվել է ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբը իր աշխատակազմով, ձևավորվել են նրա բաժինները և վարչությունները[14]: Միաժամանակ կազմվել և հաստատվել են հայկական բանակի զորամասերի ու զորատեսակների նոր հաստիքացուցակները[15], վերանայվել և հայաստանյան պայմաններին են հարմարեցվել զինվորական բոլոր կանոնագրերը[16], սահմանվել է ՀՀ զինվորական նախարարին բանակի հրամանատարական կազմի և պետերի զեկուցման կարգը և ժամերը[17], բանակում հաստատվել են եկեղեցական տոները[18]: Նրա Գլխավոր շտաբի պետ լինելու ժամանակահատվածում (1918 թ. հոկտեմբեր-1919 թ. մարտ) ձևավորվել են նաև հայկական ազգային զինված ուժերը, ստեղծվել է Հայկական առանձին դիվիզիան: Հայկական բանակի ջանքերով Հայաստանի Հանրապետությանը միացվել են Թուրքիայի կողմից նախկինում բռնազավթված հայկական որոշ տարածքներ, հայկական բանակի հաղթանակով է ավարտվել Հայաստանի անկախության հռչակումից անմիջապես հետո բռնկված հայ-վրացական պատերազմը: Դոլուխանյանն իր նամակներից մեկում (1919 թ. ապրիլի 27-ին) գրել է. «Սկզբում Թիֆլիսի Հայոց Ազգային Խորհրդի զինվորական գրասենյակի պետի, ապա Գլխավոր շտաբի պետի պաշտոններին ինձ արած հրավերը տեղի է ունեցել Թիֆլիսի Հայոց Ազգային Խորհրդի մասնակցությամբ 1918 թ. մայիսի վերջին, այն ժամանակ, երբ դարաքիլիսյան մարտերից հետո իրարանցումներ էին սկսվել Թիֆլիսում: Այդ պահից ի վեր ես աշխատել եմ ձեռքերս վայր չդնելով, Զինվորական նախարարի ղեկավարությամբ աշխատել եմ մեր բանակի ստեղծման համար, չունենալով ոչ մի դիտողություն իմ անմիջական պետի՝ զինվորական նախարար գեներալ Հախվերդովի կողմից՝ ծառայությանս միակ կոմպետենտ գնահատողի»[19]: 1919 թ. ապրիլին՝ Գլխավոր զինվորական շտաբի պետի պաշտոնը թողնելուց հետո, Ա. Դոլուխանյանը զորացրվել է, մեկնել Ռուսաստան[20]:

Դոլուխանյաններից հայկական ազգային զորամասերում ծառայել և աչքի է ընկել նաև գնդապետ Աբրահամ Դոլուխանյանը, որը եղել է Հայկական կորպուսի Երևանյան զորաջոկատի 6-րդ գնդի հրամանատար,

---

[14] *Գլխավոր շտաբի կազմի մեջ՝ որպես նրա վարչական մարմիններ, գործում էին զորահավաքային և հրահանգչական բաժինները, գրասենյակը, ինչպես նաև հրետանային, համբարակային, ռազմատեխնիկական, զորքերի բնակարանավորման, ռազմասանիտարական և ռազմաանասնաբուժական վարչությունները (տե՛ս Մ. Կ ա ր ա պ ե տ յ ա ն. Հայաստանի Հանրապետության բանակը (1918-1920 թթ.), Երևան, 1996, էջ 31):*

[15] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 41, թ. 47, 73, 76, 77, 100:*

[16] *Տե՛ս նույն տեղում, թ. 77:*

[17] *Տե՛ս նույն տեղում, թ. 109:*

[18] *Տե՛ս նույն տեղում, գ. 166, թ. 65, Մ. Կ ա ր ա պ ե տ յ ա ն. Հայ առաքելական եկեղեցու դերը Հայաստանի առաջին հանրապետության ազգային բանակի կազմավորման և ամրապնդման գործում.– «Հայկական բանակ», 2001, № 1–2, էջ 72:*

[19] *ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 38, թ. 238:*

[20] *Տե՛ս նույն տեղում:*

1918 թ. մայիսի 22–29-ը մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին[21]: 1918 թ. օգոստոսի 9-ին նա նշանակվել է Հայկական առանձին դիվիզիայի 3-րդ - հետևակային գնդի հրամանատար, եղել է նաև Հայկական առանձին դիվիզիայի սպայակազմի որակավորումն ստուգող հանձնաժողովի անդամ: 1919 թ. ապրիլի 8-ի դրությամբ եղել է ՀՀ զինվորական նախարարի տրամադրության տակ, ապա զորացրվել է[22]:

Ռուսական բանակի մարտական սպաներից էր Պողոս (Պավել) Պետրոսի Բեժանբեկը (Բեժանբեկյանը): Գնդապետի զինվորական կոչմանը նա արժանացել է 1912 թ. դեկտեմբերի 6-ին: Մարտական զանազան սխրագործությունների համար Բեժանբեկը պարգևատրվել է Սբ. Ստանիսլավի 3-րդ աստիճանի՝ սրով և ժապավենով, Սբ. Աննայի 3-րդ աստիճանի՝ սրով և ժապավենով, Սբ. Ստանիսլավի 2-րդ աստիճանի՝ սրով, Սբ. Աննայի 2-րդ աստիճանի՝ սրով, Սբ. Աննայի 4-րդ աստիճանի՝ «Խիզախության համար» մակագրությամբ, Սբ. Վլադիմիրի 4-րդ աստիճանի՝ սրով և ժապավենով ու Սբ. Վլադիմիրի 3-րդ աստիճանի՝ սրով և ժապավենով շքանշաններով[23]: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Պ. Բեժանբեկը ծառայել է Կովկասյան ռազմաճակատում, ակտիվորեն մասնակցել թուրքական զորքերի դեմ ռուսական բանակի մղած մարտական գործողություններին: 1915 թ. հունիսի 10-ին Բեժանբեկն ուղարկվել է Թուրքիայի տարածքներ, նշանակվել Կովկասյան ռազմաճակատի ռուսական բանակի կազմում գործող հայ կամավորական ջոկատների (դրուժինաների) մարտական և տնտեսական պատրաստվածությունը ստուգող ու կարգավորող սպա, այնուհետև վերադարձել է Երևան, 1915 թ. օգոստոսին նշանակվել Արարատյան դաշտավայրում գործող քրդերի դեմ ռուսական պատժիչ զորաջոկատի պետ, աչքի է ընկել մի շարք կռիվներում[24]: 1916 թ. ամռանը՝ հայ կամավորական ջոկատների կազմացրումից հետո, Բեժանբեկը Կովկասյան ռազմաճակատի ռուսական բանակի հրամանատարության հետ մասնակցել է ռազմաճակատում հայկական կանոնավոր զորամասերի՝ մասնավորապես հայկական հրաձգային գումարտակների կազմավորմանը՝ համագործակցելով Անդրանիկի, Թիֆլիսի Հայոց Ազգային Բյուրոյի անդամներ Հ. Խունունցի, Ն. Աղբալյանի, գնդապետներ Արտեմ Տեր-Նիկողոսյանի, Պավել Բեկ Փիրումյանի, Միքայել Մելիք-Մուրադյանի և այլոց հետ: 1916 թ. մարտի 27-ին Բեժանբեկը նշանակվել է Առաջին հայկական հրաձգային գումարտակի հրամանատար: Այս պաշտոնում նա ակտիվորեն մասնակցել է թուրքերի դեմ մարտական գործողություններին, Արևմտյան Հայաստանի տարածքների ազատագրմանը և աչքի է ընկել մի շարք մարտերում՝ մասնավորապես Էրզրումի, Երզնկայի, Քիլքիթի, Սվազի և Ենիքեի շրջաններում տեղի ունեցած կռիվներում:

---

[21] *Տե՛ս* Հ. Թ ո ւ ր շ յ ա ն. *Սարդարապատի հերոսամարտը, Երևան, 1965, էջ 126,* Ա. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. *Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984, էջ 136, նաև* Հ. Ա վ ե տ ի ս յ ա ն. *Հայոց ազգային միասնության հաղթանակը…, էջ 19, 94–96:*

[22] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 42, թ. 12, 52, գ. 131, թ. 16:*

[23] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, թ. 47–47ա* (Послужной список генерал-майора Павла Бежанбека):

[24] *Տե՛ս նույն տեղում:*

1916 թ. հունիսին Քիլքիթի և Երզնկայի շրջանում Բեժանբեկի գլխավորած Առաջին հայկական հրաձգային գումարտակի գործողությունների մասին շտաբային զեկուցագրում ասված է. «Հունիսի 25-ի լույս 26-ի գիշերը հրամայվեց գրոհել թուրքական անառիկ դիրքերի դեմ: Հայկական 1-ին գումարտակը արագորեն կատարեց հանձնարարված առաջադրանքը, առաջանալով լեռնաշղթայի վրայով և միանալով հարևան զորամասերին, տիրեց Բալինթափանակ գյուղի մոտ գտնվող 2300, 2350 և 2660 բարձունքներին: Դրանից հետո թուրքերը, մեծ կորուստներ կրելով, հեծելազորի պաշտպանությամբ սկսեցին նահանջել: Այս առաջին ճակատամարտի ժամանակ իր կազմավորումը նոր ավարտած գումարտակը դրսևորեց բարձր մարտական ոգի, հիանալի կարգապահություն և անդրդվելի տոկունություն: Կորցնել ամբողջ անձնակազմի կեսից ավելին (55 տոկոսը) ու նորից գործը գլուխ բերել՝ հաճախ վեր է մինչև իսկ հին ու փորձված զորամասերի ուժերից»: Զեկուցագրում նաև նշվում է, որ այդ արյունահեղ մարտերում «գումարտակը լիովին ջախջախեց ու փախուստի մատնեց թուրք երիտասարդության ծաղկից կազմավորված «Ավջի թաբուր» (Որսորդական գումարտակ – Մ. Կ.) կոչվող աշխարհազորային զորամասը, որը կազմավորվել էր գերմանացիների անմիջական մասնակցությամբ և միջոցներով»[25]: 1916 թ. օգոստոսի 8-ին Բեժանբեկն ուղարկվել է Սարիղամիշ, նշանակվել ռուսական 22-րդ Կովկասյան հրաձգային գնդի հրամանատար[26]: 1917 թ. ամռանը, երբ արդեն ռուսական բանակի փլուզման անխուսափելիությունն ակնհայտ էր, և պարզ էր դարձել, որ իրավիճակը ճակատում կարող են փրկել միայն հայկական զորամասերը, Բեժանբեկը Անդրկովկասի հայ հասարակական-քաղաքական շրջանների ներկայացուցիչներ Ա. Խատիսյանի, Հ. Զավրիյանի, Լ. Նազարյանի և այլոց հետ մասնակցել է Կովկասյան ռազմաճակատում հայկական ազգային զորամասերի ընդարձակման գործընթացին: 1917 թ. հունիսի

1-ին Բեժանբեկը՝ որպես հայ քաղաքական և զինվորական շրջանների պատվիրակության նախագահ, գործուղվել է Պետրոգրադ՝ Ռուսաստանի ժամանակավոր կառավարության ռազմական նախարար Կերենսկուն զեկուցելու, որ կազմավորվեն հայկական զինվորական նոր միավորներ՝ մասնավորապես Կովկասյան ճակատում հայկական գնդեր, բրիգադներ, դիվիզիաներ, ապա բանակային կորպուս[27]: 1917 թ. սեպտեմբերի 11-ին Պ. Բեժանբեկին շնորհվել է գեներալ-մայորի կոչում, և նա նշանակվել է 1-ին հայկական հրաձգային բրիգադի հրամանատար: Պ. Բեժանբեկի անմիջական ջանքերով ու ղեկավարությամբ, մինչև 1917 թ. հոկտեմբերի 15-ը կազմավորվել է 1-ին հայկական հրաձգային բրիգադը, որի կազմում կային 3 գունդ երկուական գումարտակով՝ 3441 զինվոր, 143 սպա և 24 գնդացիր[28]:

---

[25] *ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 15, թ. 6-7, Մ. Կ ա ր ա պ ե տ յ ա ն. Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատում (1914–1917 թթ.), Երևան, 1999, էջ 96:*

[26] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 1, թ. 47–47ա:*

[27] *Տե՛ս նույն տեղում, թ. 47ա:*

[28] *Տե՛ս* Российский государственный военно-исторический архив, ф. 2100, оп. 1, д. 72, л. 273.

1917 թ. հոկտեմբերի 23-ին Բեժանբեկն ազատվել է պաշտոնից, մնացել պահեստազորում, ապա նոյեմբերին կրկին անցել իսկական զինծառայության: 1918 թ. մարտի 6-ին նա նշանակվել է Հայկական բանակային կորպուսի Հավաքական զորաջոկատի հրամանատար՝ այդ պաշտոնում փոխարինելով զորավար Անդրանիկին[29]: Ակտիվ մասնակցություն է ունեցել 1918 թ. Անդրկովկաս ներխուժած թուրքական զորքերի դեմ Հայկական կորպուսի զորամասերի մղած հերոսական կռիվներին, աչքի է ընկել հատկապես 1918 թ. մայիսի 22–28-ը տեղի ունեցած Սարդարապատի հերոսամարտում, եղել է Երևանյան զորախմբի թիկունքի պետ[30]:

1918 թ. մայիսի 31-ին՝ մայիսյան հերոսամարտերից հետո, Հայկական կորպուսի հրամանատար գեներալ-լեյտենանտ Թ. Նազարբեկյանի հրամանով Բեժանբեկը նշանակվել է Երևանի նահանգի հայ և թաթար ազգաբնակչությունների ու գաղթականության միջև հարաբերությունների կարգավորման և բախումների կանխարգելման համար ստեղծվող հայ և թաթարական տեղական Ազգային խորհուրդների անդամներից ստեղծված խառը հանձնաժողովի նախագահ ու միացյալ զորաջոկատի հրամանատար[31]:

1918 թ. հուլիսին՝ Հայաստանի Հանրապետության կազմավորումից հետո, Բեժանբեկը Թիֆլիսում ակտիվ մասնակցություն է ունեցել Հայաստանի Հանրապետության բանակի կազմավորման գործընթացին. զբաղվել է հավաքական զորաջոկատի զինվորներին Հայաստան ուղարկելու աշխատանքներին[32]: 1919 թ. Քննիչ հանձնաժողովի ռազմապատմական բաժնի վարիչ, գեներալ Ա. Կուլեբյակինի խնդրանքով նա շարադրել է իր հուշերը, որոնք պահվում են Հայաստանի ազգային արխիվում: Դրանց մի զգալի մասը հրատարակվել է[33]: Տաղանդավոր զորապետ, մեծ հայրենասեր գեներալ-մայոր Պ. Պ. Բեժանբեկը, որն անբասիր ծառայել էր հայրենիքին, վախճանվել է Թիֆլիսում:

Այսպիսով, XIX դ. վերջին և XX դ. սկզբին ռուսական բանակում ծառայող հայ սպայական գերդաստանների՝ Արութինովների, Դոլուխանյանների և Բեժանբեկերի ներկայացուցիչներն աչքի են ընկել ինչպես 1877–1878 թթ. ռուս-թուրքական, այնպես էլ Առաջին համաշխարհային պատերազմներում, իրենց մարտական հմտությամբ և սխրանքներով արժանի ավանդ են ներդրել ռուսական բանակի տարած հաղթանակներում՝ մեծապես նպաստելով ռուսական զենքի փառքի տարածմանը: Նրանց բախտ էր վիճակվել նաև ծառայել հայկական ազգային զորամասերում, ապա Հայաստանի առաջին Հանրապետության զինված ուժերում՝ դառնալով հայկական բանակի հրամանատարական կորիզը:

---

[29] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 1, թ. 47ա:*
[30] *Տե՛ս ՀԱԱ, ֆ, 204, ց. 1, գ. 41, թ. 331:*
[31] *Տե՛ս նույն տեղում:*
[32] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 1, թ. 47ա:*
[33] *Տե՛ս Մ. Կ ա ր ա պ ե տ յ ա ն. Հայկական կամավորական խմբերը…, էջ 273–283:*

БОЕВОЙ ПУТЬ АРМЯН - ГЕНЕРАЛОВ РУССКОЙ АРМИИ КОНЦА XIX – НАЧАЛА XX ВЕКА

МУРАД КАРАПЕТЯН

Р е з ю м е

В начале XIX в. после присоединения Восточной Армении к России часть армянского народа не только избежала угрозы физического уничтожения, но и получила право призываться в русскую армию и служить в ней. В XIX в. представители армянских офицерских фамилий своими подвигами отличились как во всех русско-турецких компаниях XIX в., так и в русско-японской, Балканской и в Первой мировой войнах начала XX в. В конце XIX в. и начале XX в. в русской армии служило более 30 армян-генералов и 2000 армян-офицеров. В блестящей плеяде известных армян-генералов русской армии Багратуни, Тиграняновых, Ахвердяновых, Позояновых и других, почетное место занимают также фамилии Арютиновых, Долухановых и Бежанбековых. Представители этих офицерских фамилий своим боевым умением и подвигами внесли достойный вклад в победы, одержанные русской армией, способствовали распространению славы русского оружия. Им выпала также судьба служить в армянских национальных частях, а затем в вооруженных силах Первой Республики Армения, став ядром офицерского состава армянской армии.